ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ժողովի նիստի

Գ.Եղեգնուտ կայացած՝ 23.01.2017 ժամը 14.00-ին

Նախագահությամբ՝ Ռ.Մարգարյանի
Քարտուղարությամբ՝ Ս.Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 63 անդամներ:

Ներկա էր Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոց. Ապահովության վարչության պետ՝ Հ. Հարությունյանը, ավագանու անդամներ, Եղեգնուտի Համայնքի ղեկավարի աշխատակազմը.

Օրակարգում.- Եղեգնուտ համայնքի ղեկավարի 2016թ-ի տարեկան հաշվետվությունը իր կատարած աշխատանքների մասին:

Զեկ. Ռ.Մարգարյան (համայնքի ղեկավար);

Համայնքի ղեկավար Ռազմիկ Մարգարյանը ներկայացրեց 2016թ. Տարեկան հաշվետվությունը իր կատարած աշխատանքների մասին ինչպես մուտքային այնպես էլ ծախսային մասով:

Այսպես՝ 01.01.2016-31.12.2016 ընկած ժամանակահատվածում համայնքի բյուջե է մուտքագրվել 453420 հազար դրամ,որը կազմում է՝ 103.6%, իսկ ծախսային մասը կազմում է՝ 34032,5 հազար դրամ, ոչը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 78.3%

Մուտքագրվել է՝

| | | Պլան | Փաստացի /հազ.դրամ/ | Կատ. |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 5070.0 | 4307.3 | 84.9 |
| 2 | Գույքահարկ իրավաբանական անձանցից | 600.0 | 536.1 | 89.3 |
| 3 | Գույքահարկ ֆիզիկական անձանցից | 1800.0 | 3644.5 | 202.3 |
| 4 | Հողի վարձավճար | 2200.0 | 2416.6 | 109.8 |
| 5 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 500.0 | 774.4 | 154.4 |
| 6 | Պետական բյուջեից ստացվել է դոտացիա | 33507.0 | 33598.1 | 100.3 |
| 7 | Տեղական տուրքեր | 68.0 | 65.0 | 95.6 |
| 8 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 43745.0 | 45342.0 | 103.6 |

Այսպիսով բյուջեի կատարողականը կազմում է՝ 109,5%

Վճարվել է՝

/հազ.դրամ/

| | | |
|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 15536.8 |
| 2 | Գրասենյակային և գրենական ապրանքներ | 500.0 |
| 3 | Սոց.օգն. անապահով ընտանիքներին | 3050.0 |
| 4 | Էլեկտրական էներգիայի վճարը | 2672.0 |
| 5 | Տեղեկատվական ծառայություն | 174.2 |
| 6 | Տրանսպորտային նյութեր | 2409.5 |
| 7 | Համակարգչային ծառայություններ | 135.0 |
| 8 | Ներքին գործողումներ | 59.2 |
| 9 | Կապի ծառայություններ | 399.8 |
| 10 | Կենցաղային և հաս. Սննդի նյութեր | 450.0 |
| 11 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 495.0 |
| 12 | Մասնագիտական ծառայություններ | 120.0 |
| 13 | Ապահովագրական ծառայություններ | 31.0 |
| 14 | Սուբսիդիա մանկապարտեզին | 8000.0 |
| 15 | Տրանսպորտային սրքավորումներ | 1366.1 |
| 16 | Վարչական սարքավորումներ | 491.1 |
| 17 | Գեոդեզիական-քարտեզագրման ծախսեր | 100.0 |
| 18 | Շենքերի և շին. Կապիտալ վերանորոգում | 61223 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 42112.0 |

Ելնելով վերոգրյալից Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

Որոշում է՝

1, Համայնքի ղեկավարի 2016 թ. Տարեկան կատարած աշխատանքները գնահատել բավարար:

2. Առաջարկել համայնքի ղեկավար Ռ.Մարգարյանին և աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Վ. Սիմոնյանին՝ 2017թ-ի առաջի կիսամյակին

1) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը 100%-ով:

3.2017թ. նախատեսել խմելաջրագծերի վերանորոգում

4, Ֆին. աջակցել ոռոգման ջրատարների անցկացման աշխատանքներին:

5. Շարունակել փողոցների լուսավորության անցկացումը:

6. Կատարել կամուրջների վերանորոգում:

7. Գյուղամիջի հուշարձանի և զոհված ազատամարտիկների գերեզմանների բարեկարգում:

8. Մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի վերանորոգում:

9.Շենքային պայմաններ հատկացնել և աջակցել որ համայնքում գործեն սպորտային, երգի և պարի խմբակներ

Համայնքի ղեկավարը նշեց, որ իրենց հարկային պարտավորություններում թերանում են հատկապես իրավաբանական անձինք:

Նախագահող Ռ.Մարգարյան

Արձանագրող Ս.Ալեքսանյան